յԱտորի գրոց 'ի քաղաքն Սիս յաւուրս Գրիգորի Մագիստրոսի և որդւոյ նորա Գրիգորի Վկայասիրի, ուր յետ այլոց բանից յարէ · «Եւ յետ յամին հինգերորդի ելանելոյ իւրոյ յԵրուսաղէմ, իբրեւ լինէր առատութիւն կերակրոյ, եւ վերանայր սովն 'ի Հրէաստանէ և 'ի յԵրուսաղէմէ, ինքն Հեղինէ տիկինն Աբգարու ձեռն արկ և սկսաւ պարապել 'ի շինութիւն մատրանաց: Նախ սկիզբն արար շինել մատուռն խմն մեծամեծ քարամբք բրգաձեւ 'ի վերայ շիրմին Քրիստոսի, եւ այլ փոքր մատուռ ինչ 'ի լեառն Ձիթենեաց 'ի վերայ Ս · Ոտնատեղւոյն Քրիստոսի: Ապա շրջապատեաց քարամբք զՍ · Այրն ծննդեանն Քրիստոսի, որ 'ի Բեթղեհէմ քաղաքի, յորում է և մսուրն, ուր և եդաւ մանուկն Յիսուս խանձարրապատ: Եւ հուսկ ուրեմն ետ յօրինել կամար մի 'ի վերայ շիրմին Յակոբայ մեծի Առաքելոյն որդւոյն Զեբեթեայ, ուր սանէպ այց ելանէր առ Ս · Կոյսն մայրն Յիսուսի մերձ 'ի վերնատունն Սիօնի · · · : Եւ յետ յեօթներորդումն ամի վախճանի անդ, և թաղի առաջի դրանն Երուսաղէմի, որ 'ի հիւսիսակողմն քաղաքին, զկնի երկրորդ ամի Վերափոխման Ս · Կուսի մօրն Յիսուսի, 'ի Սեպտեմբեր ինն»: Ստորագրութիւն Երուսաղէմի · 6 · եւ յետոյ կանգնեցին 'ի վերայ գերեզմանի նորա շիրիմ նշանաւոր եւ փառաւոր յոյժ, որպէս գրեն Եւսեբի և մերս Խորենացի · Հատ · Բ · Գլ · 32: Ականատես 'ի ճանապարհորդելն իւրում յԱղէքսանդրիա աշակերտակցովք իւրովք 'ի ճեմարան գիտութեան, որ և մնացին աւուրս ինչ յԵրուսաղէմ: Մեռաւ անդ և զօրավարն Խուրան և թաղեցաւ առ շիրմի նորին:

Իսկ յաղագս շիրմի երանելի տիկնոջս պատմէ Հ · Ղուկաս Ինճիճեան 'ի գիրս Հնախօսութեան · Հատ · Բ · 299, զորոյ զբանս դիցուք աստանօր: «Շիրիմ կանգնել միայն վասն Հեղինեայ տիկնոջ Աբգարու թագաւորին՝ գտանեմք յիշատակեալ առ Խորենացւոյն, և այն յօտար երկրի · · · : Բայց զստորագրութիւն այսր շիրմի առ օտար մատենագրի ուրուք գտանիմք · որ նա ինքն է Պաւսանիաս Յոյն յԱրկատեան գիրս իւր, կամ Գիրք Ը · ուր նախ ասէ · «Եւ քանզի բազումս ճանաչեմ շիրիմս զարմանալւոյ արժանիս, զերկուս միայն յիշատակեցից յայսմ վայրի, զմին յԱղեկառնիա · իսկ միւսն 'ի Հրէաստան»: Յետ ասելոյ նորա յԱ-